ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՄԻՇՈՓ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/168 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
139	111	111	111	23.8" Սենսորային Շարժական Կոմպյուտերային QLED Դիսփլեյ՝ Հատակի Տակդիրով (Պատվանդանով) Ընդհանուր նշանակությունը և կիրառությունը Ձեռք բերվող սարքը բազմաֆունկցիոնալ, շարժական, պրոֆեսիոնալ ինտերակտիվ դիսփլեյ է (սմարթ-էկրան)՝ ներկառուցված հաշվողական համակարգով: Այն նախատեսված է նախագծերի ներկայացման, գծագրերի և գրաֆիկական պատկերների ցուցադրման, ինտերակտիվ կառավարման, ինչպես նաև մեդիա-բովանդակության հետ աշխատանքի համար: Սարքը ունի հատակի վրա հաստատուն դիրք ապահովող անվավոր տակդիր (պատվանդան), որը թույլ է տալիս էկրանը հեշտությամբ տեղաշարժել, կարգավորել բարձրությունը, թեքությունը և պտտել այն 90 աստիճանով (ալբոմային և դիմանկարային ռեժիմներ):

				Էկրանի տեխնոլոգիան և պատկերի որակը Էկրանի չափսը (անկյունագիծ)՝ 23.8 դյույմ (60.4 սմ)։ Մատրիցայի տեխնոլոգիա՝ QLED (Quantum Dot տեխնոլոգիայով LED)՝ գույների առավելագույն ճշգրտության, հագեցվածության և լայն գունային գամմայի ապահովման համար։ Էկրանի թարմացման հաճախականություն՝ 120 Հց (Hz)՝ պատկերի առավելագույն սահունության և դինամիկ տեսարանների հստակ արտացոլման համար։ Կետայնություն (Resolution)՝ Full HD (1920 x 1080 պիքսել)։ Սենսորային շերտ (Touch Screen)՝ Բազմակետ կապասիտիվ սենսորային էկրան (Multi-touch՝ առնվազն 10 համաժամանակյա հպման աջակցմամբ)՝ արագ արձագանքով և սահուն կառավարմամբ։ Տեսանկյուններ՝ Լայն տեսանկյուններ (178°/178°)՝ առանց գունային աղավաղումների։ Ապարատային հզորություն և Օպերացիոն համակարգ Սարքը պետք է ունենա ներկառուցված սմարթ-պլատֆորմ (համակարգչային մոդուլ)՝ օպտիմալացված բազմամիջուկանի պրոցեսորով, 4 ԳԲ օպերատիվ հիշողությամբ (RAM) և նվազագույնը 64 ԳԲ ներկառուցված մշտական հիշողությամբ (ROM)։ Որպես օպերացիոն համակարգ պետք է հանդես գա Android ՝ հավելվածների տեղադրման, ցանցային աշխատանքի և արտաքին սարքերի հետ ինտեգրման լիարժեք աջակցմամբ։ Կապ, ինտերֆեյսեր և աուդիո համակարգ։ Անլար կապ՝ Ներկառուցված երկհաճախականություն Wi-Fi (2.4 ԳՀց և 5 ԳՀց) և Bluetooth մոդուլներ՝ արտաքին սարքերից պատկերի անլար փոխանցման (Screen

					Mirroring/Casting) աջակցմամբ։Միացման պորտեր՝ Ֆիզիկական միակցիչների առկայություն՝ ներառյալ HDMI (արտաքին համակարգիչ կամ նոթբուք միացնելու և որպես մոնիտոր օգտագործելու համար) և USB պորտեր (Type-A և Type-C)՝ տվյալների փոխանցման և արտաքին կրիչների միացման համար։ Ձայնային համակարգ՝ Ներկառուցված հզոր ստերեո բարձրախոսներ, որոնք ապահովում են մաքուր և հստակ ձայն առանց արտաքին ակուստիկ համակարգերի անհրաժեշտության։ Էրգոնոմիկա, Կոնստրուկցիա և Սնուցում Տակդիրի (պատվանդանի) ֆունկցիոնալություն՝ Հատակին հաստատուն կանգնող մետաղական ՝ ներքևի հատվածում թաքնված անիվներով՝ սենյակից սենյակ հեշտ տեղաշարժման համար։ Էկրանի բարձրությունը պետք է լինի կարգավորվող, իսկ ամրակը պետք է ունենա Pivot ֆունկցիա (էկրանի պտույտ հորիզոնականից ուղղահայաց դիրքի)։ Ինքնավարություն (Մարտկոց)՝ Տակդիրի կամ էկրանի մեջ ներկառուցված վերալիցքավորվող մարտկոցի առկայություն, որն ապահովում է ոչ պակաս, քան 3-4 ժամ լիարժեք ինքնավար աշխատանք՝ առանց էլեկտրական ցանցին մշտական միացման։ Սնուցում՝ 220Վ էլեկտրական ցանցից աշխատանքի և մարտկոցի լիցքավորման հնարավորություն (համապատասխան սնուցման բլոկով)։ Լրակազմ և երաշխիք։ Լրակազմում պետք է ներառված լինեն՝ սենսորային դիսպլեյը, շարժական ֆունկցիոնալ տակդիրը, հեռակառավարման վահանակը, սնուցման մալուխը/ադապտերը և

				օգտագործման ձեռնարկը: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ և ունենա պաշտոնական երաշխիքային սպասարկում:Ապրանքը պետք է լինի նոր, չօտագործված, անվնաս, չպարունակի գործարանային դեֆեկտներ: Ապրանքը պետք է լինի ոչ սիրողական՝ պրոֆեսիոնալ (մասնագիտացված) դասի և նախատեսված լինի մեծ ճնշումներով և երկարատև մասնագիտական աշխատանքի համար: Մատակարարումից առաջ ապրանքը և արտադրողի անվանումը (), մոդելը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարումից առաջ, նախապես ներկայացնել նմուշ և համաձայնեցնել պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

МИШОП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/168 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	марка	наименование производителя	технические характеристики
139	-	-	-	-